



47 տող է: Աերջին օրերս մի թանգագին հնութիւն ևս յայնուեցաւ. մոզայիկ խաչի մի մաս: Այս դիւար կարենոր է այն պատճառով որովհետև այդպիսի մոզայիկներ շատ հազուադիւս են Հայոց մէջ, Հմէշեյով Երուսնոզէմու՛մ մի քանի տարի առաջ հայերէն արձանագրութեամբ գեղեցիկ մոզայիկը, որ հրատարակուած է Zeitschrift der Deutschen



Palastina-Vereins. Band. XVIII: Հաւանօրէն Երուսաղէմի մոզայիկը աւելի ուշ ժամանակի գործ է քան Զուարթնոց եկեղեցուներ: Մոզայիկ խաչը շրջապատուած է մրանու խաչոր և կանաչ տերեւների մի պսակով: Հայր Խաչիկը պատրաստու՛մ է իւր պեղումների և գիւտերի մանրամասն նկարագրութիւնը, որ ժամանակին կ'ըրտարակուի «Երարտու ում»:

ՃԵՄԱԲԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ

Օգոստոսի 20-ին ձեմարանի տեսուչ Տ. Աարապեա վարդապետ վերագարձաւ իւր ուսումնական ձանապարհորդութիւնից, որ ձեռնարկել էր մի խումբ լսարանական ուսանողների հետ: Հայր տեսչի առաջնորդութեամբ երկուստարդ ուսանողները այցելել են Աւսիք, Արցախ և Սիւնեաց նահանգները և Գողթն գաւառի ու հին Նախիջևանի վերայով կրկին ձեմարան գարձել:

ձեմարանի համար այս տարի նոր ուսուցիչներ են նշանակուած Մայր Աթոռի միաբաններէից Արժ. Տեառք Եղնիկ վարդապետ՝ հայ լեզուի և գրութեան Զուսիկ վարդապետ Զոհրաբեան սաստաւածարանական աւարկաների մտիմեմախբայի համար հրաւիրուած է Պ. Բուդաղեան, ստորին դասարանների ուսուերէնի համար Պ. Արրահամեան:

Աւագ. 4-ին վերաքննութիւններն ու նոր ընդունուողների քննութիւնները վերջացան և սոյորական աղօթքից յետոյ՝ գաս սկսուեցաւ: Հոգեոր Տիրոջ հրամանով այս տարի ընդհանուր ընդունելութիւն չկար, որպէս բացառութիւն միայն ընդունուած են 35 հոգի:

ՏԱԿԱՀԱՅՔ.

Խառն ժողովը գումարուելով գումարուեցաւ. Վարաթիոյ խորհրդարանին մէջ, նախագահութեամբ Ս. Պատրիարք Հօր և առենապետութեամբ Սակփան փաշա Ասլանեանի՝ հետեւեալ կարգադրութիւններն ըրաւ.

Բաղէշի Առաջն. Տեղապահ Եղիշէ վարդապետի օգտակար պաշտօնավարութիւնը նկատողութեան առնելով, մերժեց հրաժարականը և որոշեց գրել, որ անձնական տկարութիւնը դարձանելու համար թէև եռամեայ արձակուրդ մը արուած էր իրեն, սակայն ներկայութիւնը կարենոր ըլլալով հոն, յարմար առթի մը պէտք է յետաձգէ այդ արձակուրդը, ժողովը մերժեց նաև Վանայ այցելու հովիւ

Տ. Ներսէս եպիսկոպոսի հրատարականքն եռամսեայ արձակուրդ տարով Պոլիս կամ այլուր երթալու իր առողջութիւնը դարմանելու համար:

Ընդունենք է Էտիրնէի տեղապահ Խօլտամեան Պօղոս վարդապետի հրատարականքը: յառաջիկային թողով տեղապահ ընտրութիւնը:

Մերժենք է Մուշի Առաջն. Տեղապահ Բարկէն վարդապետի հրատարականքը, յանձնարարելով վիճակին մէջ յարմար տեղ մը օգտփոխութեան երթալ:

Եռամսեայ արձակուրդ տուաւ Տիարպէրիի առաջնորդական տեղապահ Եղեկիէլ վարդապետի:

Մալաթիոյ Գաւառ. Ժողովը տեղապահ ընտրած էր Խաչատուր վարդապետը, Ժողովը հաստատեց յիշեալին ընտրութիւնը:

Հալէպի հրատարակ Առաջն. Տեղապահ Պետրոս վարդապետի տեղ, փոխանորդ կարգած էր տեղւոյն քահանաներէն մէկը, Ժողովը Գաւառ. Ժողովին խնդրանաց վրայ հաստատեց զայն իւր պաշտօնին մէջ:

Ամստիոյ Գաւառ. Ժողովոյ խնդրանաց վրայ որոշուեցաւ ինչ ինչ գիտողութիւններով առաջնորդական ընտրութեան հրահանգ տալ:

Ժողովը երկարօրէն խորհրդակցեցաւ Վիճակային կազմակերպութեան, առաջնորդական ընտրութեանց և անոնց ոմանց հրատարման պարագայի վրայ, և Կրօնական Ժողովին յանձնեց ուսումնասիրել այս խնդիրները, և հրահանգ մը պատրաստելով արգիւնքը հաղորդել Ժողովին:

— Անայ այցելու Տօփի Տ. Ներսէս եպիսկոպոս Ասլանեան, Կրօնական Ժողովին մէկ հարցման պատասխանելով՝ կըսէ թէ Լիմի վանհայրութեան համար որոշուած Սահակ վարդապետ և Կոստցի վանհայր կարգուած Ստեփան վարդապետ այդ պաշտօնները վարելու ձեռնհաս են և թէպէտ Տ. Յովսէփ եպիսկոպոս բարի և պարկեշտ եկեղեցական մըն է, բայց այդ վանհայրական պաշտօնը վարելու զժուարութիւն կը քաշէ, զիստորաբար իր ձեռութեան պատճառաւ: Այս տեղեկութեանց վրայ հիմնուելով, Կրօնական Ժողովը հաստատիր է վերոյիշեալ երկու վարդապետներուն վանհայրութիւնը, բայց նկատելով որ Բագրևանդեան Սահակ վարդապետ՝ ի բացակայութեան Տ. Ներսէս Արքայանի՝ վիճակային գործերը պիտի վարէ, մինչև ջնոր կարգադրութիւն որոշիր է որ ըստ առաջնոյն Յովսէփ եպիսկոպոս Լիմի վանհայր մնայ:

— Քսանըհնգ որբեր որբուհիներ, երկու ամիս առաջ Ալաշկերտի գիւղերէն ճամբայ հանուելով Էրզրում բերուած էին՝ հոն Բողոքականներու վարժարանն յանձնուելու համար, Բայց ոչ կառավարութիւնը և ոչ տեղւոյն ազգ. պաշտօնական մարմինը տեղեկութիւն չունենալով այս մասին, որբերը ետ դարձուեր են, Այդ որբերը բեր-

ող ուրիշ 5 որբեր ալ յանձնել է Էրզրումի բողոքականներու վարժարանին, Պատրիարքարանը գումար մը զրկած էր Էրզրումի Առաջնորդարանը, այդ որբերը պահելու համար, Տեղապահ Զաւէն Ծ. վարդապետ մտադիր է եղեր այդ գումարով որբանոց մը բանալ Ալաշկերտի մէջ:

— Սոսի Վաթոյ. տեղապահ ասկէ առաջ Մանճըլլըզի վանքին համար վանհայր մը կարգելու պէտքը զգացուցած էր Պատրիարքարանի, Ժողովը նկատելով որ յիշեալ Վիճակը Սերաստիոյ կը վերաբերի, յանձնարարեց գրել Ն. Սրբազնութեան, որ Վիճակին առաջնորդ Տ. Պետրոս Արքեպիսկոպոսի հետ բանակցելով հարկ եղած ընտրութիւնը կատարէ, այս առթիւ յիշեցնելով որ Գարեգին վարդապետ Աժտերեան, իբրև միաբան նոյն վանուց, պէտք է մնայ ցվերջ այդ վանքին մէջ, և եթէ անաստ է, կարգաւորյժ ընէ զայն:

Աղեքսանգրիոյ Հոգևոր Հովիւ Վահրամ վարդապետ հարցում մը ուղղած էր Պատրիարքարան թէ՛ Պօթուշանի Աթանաս քահանային եղած պատժական կարգադրութիւնը միայն նոյն տեղւոյ համար է, որոշեց պատասխանել թէ տրուած որոշում ամէն տեղի համար է, և չի կրնար ուրիշ տեղ մը քահանայադործել յիշեալը:

— Քէօթահիոյ Հայ հոռոժեական եկեղեցականներէն Էմմանուէլ վարդապետ Պալեան՝ Հայ եկեղեցւոյ մէջ ընդունուելու փափաք յայտներ, և տեղւոյն Առաջնորդարանէն գրուեր է Պատրիարքարանի:

— Ամեն. Ս. Պատրիարք Հայրն՝ Կրօնական ժողովականաց ոմանց խորհրդակցութեամբ՝ Քէօթահիոյ Առաջնորդարանէն ծանօթութիւն ուղեր է Հայ եկեղեցւոյ գիրկը զալ ուզող Էմմանուէլ Պալեան անուն հոռոժեական վարդապետին վարուց ու բարուց վրայ:

— Քէօթահիոյ Հայ—Հոռոժեականաց առաջն. տեղապահ Էմմանուէլ վարդապետ Պալեան, որ Հայ եկեղեցւոյ գիրկը վերադարձած էր և Հայոց առաջնորդարանը կը մնար, շարաթ իրիկուն ժամը կէօփին Պոլիս հասնելով ուղղակի Պատրիարքարան գնաց և Ս. Պատրիարք Հօր հետ նոյն իրիկունը ճաշելէ և Հայ եկեղեցւոյ գիրկը դառնալուն պատճառներուն վրայ երկարօրէն տեսակցելէ ետքը, Պատրիարքարան մնաց, Երէկ ալ ներկայ գտնուեցաւ պատարագի արարողութեան:

— Քէօթահիոյ Հայ—Հոռոժեական եկեղեցականներէն Էմմանուէլ վարդապետ Պալեան Ժողովին ներհայանալով, իրեն ուղղուած հարցումներուն բացատրութիւնները տուաւ և յայտնեց թէ ներքին համոզմամբ կը զիմէ Հայ. եկեղեցին, Ժողովը ընդունելով յիշեալ վարդապետին դիմումը, յանձնեց Ս. Պատրիարք Հօր՝ ըստ օրինի վեղար տալ անոր և միանգամայն որոշեց Արմաշու վանքը զրկել

գինքը՝ որպէս զի ժամանակ մը այնտեղ մնալով
էայ. Եկեղեցւոյ ծէսերը և վարդապետութիւնը
պէտք եղած կերպով սորվի:

— Եզեսիոյ մեր («Արևելք») թղթակիցը Հետևեալ-
ները կը հաղորդէ մեզ յուլիս 29 թուականով. — Այս
անգամ գոհութեամբ իմացանք, որ Պատրիարքարանի
Նպաստից Թանձնաժողովը որոշեր է անմիջապէս մէյ
մէկ նպաստը կալ նախակրթարան բանալ նաև Ե-
զեսիոյ վիճակի Պիրեճիկ-Նփրատ գիւղաքաղաքին և
Հոսմ — Ալայի մերձաւոր ճիւղին գիւղին մէջ, Մե-
ծապէս գնահատելի են սոյն որոշումը՝ քանի որ կը
միտին մայրենի լեզուին գիտակցութենէն զրկուած
միջավայրերու մանկանց կրթութեանը օգնելու:

— Հիւանդանոցի հոգաբարձութիւնը կը ծա-
նուցանէ Հետևեալ նուիրատուութիւնը. — Ազն.
Տիկնայք ճանրման, Պաղտատլեան, Բրթօրօթ և
Բէյիզեան իրենց հանգուցեալ մօր Տիկին Քազուհի
Գ. Ներսէսեանի անուան տարեդարձին առթիւ
քառասուն օսմ. ոսկի Հիւանդանոցիս նուիրել բա-
րեհաճած ըլլալով, Հոգաբարձութիւնս յանուն
ընդհանուր պատասպարելոց իր խորին շնորհակալու-
թիւնը կը յայտնէ առ բարեսէր նուիրատուս և
կը յաւելու թէ ըստ փափաքանաց իրենց, յառա-
ջելիայ կիրակի Ս. Աստուածածնայ Աերափոխման
տօնի օրը հաստատութեանս Ա. Փրկչի մատրան
մէջ յատուկ պատարագ և հոգեհանգստեան պաշ-
տօն պիտի կատարուի և այս առթիւ ընդհանուր
պատասպարելոց հոգեհանգ պիտի տրուի:

— Պատրիարքարանի ուղղուած նամակ մը կը
ծանուցանէ, թէ Մեծոխայ վանքէն հինգ դարու
հնութիւն ունեցող արծաթապատ գրչագիր Աւետա-
րան մը, որ անուանի էր գիրին և զարդադիրներու
գեղեցկութեամբ, և որ մեծ Խաչի մը հետ մէկտեղ
կորսուած էր, վերջերս գտնուեր է առաջն. փո-
խանորդ Բագրևանդեան Սահակ Ծ. Վարդապետի
ջանքով:

— Բիւրակն հանդիսի հրատարակութիւնը
զազարեցաւ լրագրական վերատեսչութեան հրա-
մանաւ:

— Իտալիոյ մայր-թագուհին իր քաղաքային
տան դիւանապետին միջոցաւ հեռագրաւ շնորհա-
կալութիւն յայտնած է Ս. Պատրիարք Հօր ցաւակ-
ցական հեռագրին համար:

— Երուսաղիմայ ժառանգաւորաց վարժարա-
նի քննութիւնները աւարտեր են, Այս տարի 9
չրջանաւարտ ունի, որոնք ուսած են հետևեալ
ճիւղերը, Հայերէն՝ քերականութիւն, Ճարտասա-
նութիւն, Եկեղեցական՝ հին և նոր կտակարանի
պատմութիւնը, ուսողութիւն, աշխարհագրութիւն,
տիեզերագրութիւն, (այս զասերը աւանդած են Տ.
Սահակ եպիսկ. Խապայեան), հին և նոր կտակա-
րան, չորս աւետարաններու մեկնութիւն (գասախօս
Տ. Մամբրէ եպս.), բնագիտութիւն, հայերէն:

Ֆրանսերէն (գասախօս Կարապետ Ա.), գեղագրու-
թիւն (Յարութիւն Ա.), թուրքերէն և երաժշտու-
թիւն ձայնագրութեամբ (Պ. Սողոմոն Գրիգորեան)
պատմութեան զանազան ճիւղեր՝ (Գէորգ սարկա-
ւագ), ֆրանսերէն (գասախօս Մ. Ալթորոս հրեայ),
Շրջանաւարտ աւարտական ճառեր գրած են՝ կրօնա-
կան նիւթերու վրայ, Ժառանգաւորաց վարժարանի
ընթացաւարաններու համար հոգևորական ասպարէզը
մտնել պարտաւորիչ չէ այլ իբրև դպիր, քարտուզար
կամ ուսուցիչ 3 տարի պիտի ծառայեն վանքին և
ապա ազատ ըլլան գուրս կէլելու և ուզած գործերին
ընտրելու: Այս տարուան չրջանաւարտները ամսոյս
վերջերը պիտի ղրկուին Սուրբ տեղերը, դպրութեան
պաշտօնով:

ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

ՕՐԹՈՂՈՔՍ ԵԿԵՂԵՑԻ.

ՌՈՒՍԱՅ ԵԿԵՂԵՑԻ

Ներկայումս Ռուսաց Եկեղեցական նուիրա-
պետութիւնը կազմուած է 67 թեմ, 115 եպիսկո-
պոսներով: Սոցանից մետրապօլիտ են 3, արքե-
պիսկոպոս 15 (1 էքզարխի տիտղոսով), եպիսկո-
պոս 97 հոգի: Ս. Սինօզի անդամներ են 5 (մետ-
րապօլիտներ) էքզարխ և Նովոօրօզ. եպիսկոպոս),
Սինօզու մշտապէս ներկայ եղող անդամ եպի-
սկոպոս 2, Սինօզի հերթական անդամ արքեպի-
սկոպոս 2: Ելեք մետրապօլիտ, 14 արքեպիսկոպոս
և 50 եպիսկոպոս վարում են թեմական առաջ-
նորդութեան պաշտօններ. 1 արքեպիսկոպոս և 9
եպիսկ. արձակուած են թեմակալութիւնից, որոն-
ցից ոմանք վարում են սինօզական Ատեանի (СѦ-
НОДАЛЬНАЯ КОНОРА) անդամութիւն, վանահայրու-
թիւն և ոմանք ևս վանքերի միաբան են: Մնա-
ցած 57 եպիսկոպոսները վարում են փոխ-թե-
մակալութեան և յաջորդութեան պաշտօններ:

Մետրապօլիտական թեմերում յաջորդներ
կան՝ իւրաքանչիւրում 3, 5 թեմում՝ երկ-եր-
կուս (Վօլ., Թիֆ., Խերս., Ղաղ., և Վիստի.),
25 թեմում մի-մի, որոնցից 4 յաջորդութիւն
թափուր է (Տամբ., Թուր., Սարատ., Տօբօլսկ),
3 յաջորդութիւն վայելում են կէս-անկախ թե-
մակալութիւն (Վիլնիուս., Սարապուլ., Ռի-
վելի՝ ճապոնիայում) և 3 թեմ. առաջնորդու-
թիւն կախումն ունին էքզարխից (Իմերետ.,
Գուր-մինգրել., Սոխում.):

Կրթութեամբ 115 եպիսկոպոսները 22/25